

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/7**

ք. Երևան

«28» 11 2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՆՕՍ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ալիխանյան եղբայրներ 2 հասցեում գտնվող տարածքում՝ ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի և «ՄՈՒԳԿ» ՓԲԸ-ի համար շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

### **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում (Փուլ 1-ը Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո, իսկ Փուլ 2-ը քաղաքաշինական պարզ և համալիր փորձաքննությունների դրական եզրակացությունները ստանալուց հետո) ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացառական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 16 000 000 (տասնվեց միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-

ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ծառայության դիմաց վճարումը կիրականացվի փուլերով՝ Պայմանագրի N 1 հավելվածի 18-րդ կետի համաձայն:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում

Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011058956  
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝



Գ. Եղիազարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

### ԿԱՏԱՐՈՂ՝

«ՆՆՍՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ  
ք. Երևան, Արվյան 292., 15բն.  
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ  
Հ/Հ 16600057361700  
ՀՎՀՀ 01553657

Տնօրեն՝



Վ. Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը
1	71241200/72	ՀՀ դրամ	16 000 000	1	ՀՀ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 210 օրացուցային օր:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.	Նախագծման հիմքը	ՀՀ կառավարության 2025 թվականի օգոստոսի 7-ի N 1080-Ն որոշում
2.	Պատվիրատու	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
3.	Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր	Ճարտարապետահատակագծային առաջադրանքը և ենթակառուցվածքների վերաբերյալ տեխնիկական պայմանները կամ դրանց հնարավորության վերաբերյալ շահագործողի գրությունները կտրամադրվեն պատվիրատուի կողմից
4.	Նախագծման փուլեր	Նախնական և աշխատանքային նախագծեր
5.	Ելակետային տվյալներ	Վարչական շենքը տեղակայվելու է 01-001-0207-0004 կադաստրային ծածկագրով՝ 0.55701 հա հողատարածքի վրա: Տարածքը գտնվում է քաղաք Երևան, Աջափնյակ Ալիխանյան եղբայրների փողոց 2 հասցեում

Նախագծերի կազմման համար հիմք հանդիսացող գործընթացներ

6.	Ինժեներագեոդեզիական հանութագրում, հողատկայցման հիմքերի ձեռքբերում	Իրականացնել տարածքի գեոդեզիական հանութագրում, հատակագծերի և բնորոշող կտրվածքների կազմում՝ մշակում: Նշել գոյություն ունեցող ինժեներական ցանցերը, ոչ համայնքային պատկանելության տարածքներն ու կառույցները: Հանույթը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ: Ամրագրել և ներկայացնել հենանիշերի (репер) ցուցակ
7.	Ինժեներատեխնիկական և հիդրոտեխնիկական հետազոտություն	Համաձայն գործող նորմերի պահանջների՝ հորատման միջոցով իրականացնել ինժեներատեխնիկական հետազոտություններ և տրամադրել մանրամասն եզրակացությունները ու տեխնիկական պահանջներ, ըստ հորատահանուկի լաբորատոր փորձարկման արդյունքների որոշել գրունտների տեսակները, ինչպես նաև դրանց մշակման կարգերը: Ինժեներատեխնիկական հետազոտության հորատման տեղերի ընտրությունն իրականացնել նախագծի ճարտարապետի հանձնարարականով, գեոդեզիական հանույթի հատակագծում նշված կոորդինատներով, որոնք հնարավորինս մոտ պետք է լինեն կրող առանցքներին: Հորատահանուկի(кери) համար ապահովել պահպանում, նմուշների համար նախատեսված արկղերով մինչև հիմքի աշխատանքների ավարտ: Գրունտային ջրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:

8.	Ինժեներական հաղորդակցուղիների ուսումնասիրություն	Գոյություն ունեցող արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում) տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, եզրակացությունների ձեռքբերում և հատակագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում
9.	Ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ	Ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ, եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, կրթություն, մշակույթ և սպորտ, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն և այլն):
10.	Կառուցի բնութագիրը և նախագծային պահանջներ	<p>Նախատեսվում է մշակել ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի), Կոմիտեի վթարային հակազդման կենտրոնի (այսուհետ՝ Վթարային կենտրոն), միջուկային և ռադիոակտիվ անվտանգության գիտատեխնիկական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն), և Կոմիտեի ռադիոքիմիական լաբորատորիայի (այսուհետ՝ Լաբորատորիա), երկաթբետոնե կոնստրուկտիվ լուծումներով շենքի/երի նախագծանախահաշվային փաստաթղթեր</p> <p>Անհրաժեշտ սենյակները և դրանց մակերեսները ներկայացված են կից Հավելվածում</p> <p>Նախատեսել՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ըստ անհրաժեշտության գոյություն ունեցող շինությունների քանդման նախագիծ,</li> <li>• նոր կառուցվող շինությունը/ները առանձին կամ համատեղ պետք է ունենան</li> </ul> <ol style="list-style-type: none"> <li>1. ադմինիստրատիվ՝ գրասենյակային նշանակության տարածքներ Կոմիտեի և Վթարային կենտրոնի բնականոն աշխատանքն ապահովելու համար,</li> <li>2. ադմինիստրատիվ՝ գրասենյակային նշանակության տարածքներ Կենտրոնի բնականոն աշխատանքն ապահովելու համար,</li> <li>3. ադմինիստրատիվ և լաբորատոր տարածքներ՝ Լաբորատորիայի բնականոն աշխատանքն ապահովելու համար,</li> <li>4. Կոմիտեի և Լաբորատորիայի համատեղ օժանդակ բաժիններ՝ ընդհանուր բաժին, կադրերի բաժին, հաշվապահություն, գաղտնի բաժին և այլն,</li> </ol> <ul style="list-style-type: none"> <li>• Կառուցվող շինությունների հարկայնությունը չպետք է գերազանցի 4 հարկը՝ ներառյալ օգտագործվող նկուղային հարկը,</li> <li>• Պահուստային էլեկտրասնուցման համակարգ (դիզել գեներատորային կայան),</li> <li>• Սերվերների սենյակ,</li> <li>• Մարզասրահ (մարզական գործիքներով և վարժասարքերով հագեցած),</li> </ul> <p style="text-align: center;"><b>Կոմիտեի և Վթարային կենտրոն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Վթարային կենտրոնի համար նախատեսվող տարածքները (շինության մասը) պետք է լինեն վթարային իրավիճակներում գրասենյակային աշխատանքների կատարման համար՝ Կոմիտեի 15-20 աշխատակցի համար,</li> <li>• Տարածքներ ադմինիստրատիվ և գրասենյակային աշխատանքների կատարման համար՝ Կոմիտեի 80-85 աշխատակցի բնականոն աշխատանքն ապահովելու համար,</li> <li>• Պատուհանները ձայնա և ջերմամեկուսիչ, մետաղապլաստ,</li> <li>• Դռները փայտյա կամ մետաղապլաստ,</li> <li>• Հոսանքի, հեռախոսալարերի, համակարգչային ցանցի լարերը պատի վրայով մոնտաժված՝ պլաստմասսե տուփերում, յուրաքանչյուր սենյակում նախատեսել առնվազն 3 տեղամաս՝ 4-ական վարդակներով, հանդիպումների համար նախատեսված դահլիճներում նախատեսել դրանց կրկնապատիկը, կեսը տեղակայել հատակին,</li> </ul>

- Վթարային և հակազդման կենտրոնը տեղակայել շինության այնպիսի մասում, որ պաշտպանված լինի արտաքին ազդեցությունից,
- Սենյակների քանակները ըստ մակերեսների ներկայացված է Հավելված N 1.1-ում:

#### Կենտրոն

- Կենտրոնի համար նախատեսվող տարածքները (շինության մասը) պետք է լինեն վթարային իրավիճակներում գրասենյակային աշխատանքների կատարման համար՝ Կոմիտեի 40-50 աշխատակցի համար,
- Սենյակների քանակները ըստ մակերեսների ներկայացված է Հավելվածում N 1.1-ում:

#### Լաբորատորիա

- Սենյակները պետք է տեղակայվեն շինության նկուղային և առաջին հարկերում
- Նախատեսված տարածքը պետք է ֆիզիկապես առանձնացված լինի
- Բնականոն աշխատանքային պայմաններ 15-20, աշխատակցի համար,
- Լաբորատոր հատվածում պետք է նախատեսել նախագծվող շենքի օդորակման համակարգից անկախ օդաքարչիչ, օդամղիչ և օդի ֆիլտրացիոն համակարգեր՝ հաշվի առնելով, որ օգտագործվելու են քիմիական պահարաններ, քիմիական վտանգավոր նյութեր,
- Լաբորատորիայում տեղադրվելու են ծանր սարքավորումներ, ուստի անհրաժեշտ է ապահովել հարկերի բարձր կրողունակություն, առնվազն 3-4 տ 1 քմ մակերեսի համար,
- Որոշ սենյակների դռների բացվածքները պետք է նախատեսել մեծ չափի սարքավորումներ անցկացնելու համար,
- Նախատեսել եռաֆազ հոսանքի հնարավորություն,
- նախատեսել առանձնացված մուտք բակի կողմից՝ թեքահարթակով,
- նախատեսել մուտք նկուղ շինության առաջին հարկից աստիճանավանդակի և վերելակի միջոցով,
- նախատեսել հատուկ կոյուղու համակարգ, կոյուղաջրերի հավաքման բաքեր (նշված բաքերում հավաքվելու են առաջին/նկուղային հարկերի լաբորատոր սենյակների հատուկ կոյուղու կոյուղաջրեր, այդ թվում՝ լվացարանների): Բաքերի ծավալը պետք է լինի ոչ պակաս 5խմ,
- նախատեսել սանհանգույցներ,
- նախատեսել առանձնացված սենյակներ, որոնց մուտքերը պետք է լինեն հանդերձարանների, սանհանգույցների, լոգասենյակների միջոցով,
- խորհրդակցությունների սենյակ 15 անձի համար,
- հատակները սալիկապատ, պատերը հատակից մինչև 2 մ բարձրություն՝ սալիկապատ, մնացածը՝ ջրակայուն ներկ,
- առաստաղը կախովի՝ ներդրված լուսատուներով,
- Դռները մետաղապլաստ և երկաթյա
- Պատուհանները ձայնա և ջերմամեկուսիչ, մետաղապլաստ,
- Հոսանքի, հեռախոսալարերի, համակարգչային ցանցի լարերը պատի վրայով մոնտաժված՝ պլաստմասսե տուփերում, յուրաքանչյուր սենյակում կախված մակերեսից նախատեսել առնվազն 3-8 տեղամաս՝ 4-ական վարդակներով,
- Սենյակների քանակները ըստ մակերեսների ներկայացված է Հավելված N 1.1-ում:
- Կոմիտեի, Կենտրոնի, Վթարային կենտրոնի և Լաբորատորիայի համար պետք է նախատեսել առանձնացված համակարգչային և հեռախոսակապի ներքին ցանցեր,
- 2 առանձին տարածք և համապատասխան ցանց՝ գաղտնի գրագրության ապահովման համար,

		<ul style="list-style-type: none"> <li>• Նախատեսել առնվազն 2 առանջնացված սենյակ՝ սերվերների տեղադրման և շահագործման համար,</li> <li>• Նախատեսել տարբեր նշանակության պահեստային տարածքներ,</li> <li>• Առանձին պահեստային տարածքներ օգտագործվող քիմիական և այլ միջոցների, հետազոտվող նմուշների և ռադիոակտիվ աղբյուրների պահման համար,</li> <li>• Շինության հարակից տարածքում պետք է նախատեսել դիզել-գեներատորների համար նախատեսված տարածք,</li> <li>• ավտոկայանատեղի՝ առնվազն 50 մեքենայի համար, ապահովել էլեկտրասնուցում և ջրամատակարարում, 5 էլեկտրական մեքենաների լիցքավորման կայաններ, ծառայողական մեքենաների համար ծածկով կայանատեղի,</li> <li>• հատուկ տրանսպորտային միջոցների կայանման վայրերում պետք է նախատեսել տարածք՝ մեքենաների սպասարկման համար անհրաժեշտ գործիքների և տեխնիկական միջոցների պահման համար,</li> <li>• նախագծով նախատեսել ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, օդափոխության և օդորակման, սառնամատակարարման՝ ըստ պահանջի, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, ինքնաշխատ հրդեհաշիջման համակարգ, տեսահսկման, գազամատակարարման կապի, անվտանգության համակարգերի, ջրահեռացման, հողանցման/ համակարգերի կառուցում, շենքի արդիական ներքին հարդարում,</li> <li>• շենքը պետք է ապահովված լինի տարբեր SS համակարգերով և գործիքներով (ինտերնետ, ներքին մոնիթորինգ, անվտանգության սարքավորումներ, վերահսկվող և թույլատրված մուտք դեպի տարածք), Կոմիտեի, Կենտրոնի և Լաբորատորիայի անվտանգային համակարգերը պետք է լինեն տարանջատված,</li> <li>• նախագծով նախատեսել շենքի համալրում հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ՝ <b>համապատասխան ինվենտարով</b>, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, <b>համապատասխան հիմնավորմամբ վերելակ կամ վերհան սարքի անհրաժեշտություն</b>: Նախագծում վերելակներ և կաթսայատներ նախատեսելու դեպքում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձեռքբերում <b>նախագծողի կողմից</b></li> <li>• նախագծով նախատեսել տարածքի բարեկարգում, ասֆալտապատում, կանաչապատում, արտաքին լուսավորություն, , ոռոգման համակարգ, ինչպես նաև արտաքին հաղորդակցուղիների կառուցման, վերակառուցման կամ քանդման և այլն (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն), էներգետիկ նշանակության կառույցներ՝ սարքեր-սարքավորումներ (էլեկտրա ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման) ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով,</li> <li>• նախագծում նախատեսել այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար</li> <li>• պահանջվող բոլոր սարք սարքավորումների, գույքի (ներառյալ սպորտային) վերաբերյալ մասնագրեղում ներառել պահանջվող</li> </ul>
--	--	--

		<p>մանրամասն տեխնիկական բնութագրերը, անհրաժեշտության դեպքում հաշվարկներով հիմնավորված:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Նախագծման ընթացիկ ծառայությունները աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ, բոլոր փուլերում՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները (այդ թվում հաշմանդամների տեղաշարժի համար մատչելի պայմանների ապահովման) և օգտագործելով արդի մոտեցումներ, ծագած բոլոր հարցերը քննարկելով պատվիրատուի հետ:</li> <li>• Նախագծի վերաբերյալ այլ մանրամասնությունները և պահանջները կներկայացվեն պատվիրատուի կողմից նախագծի էսքիզային տարբերակի քննարկման ժամանակ:</li> <li>• Մանրամասն կահավորման նախագիծ (կահավորանքի մանրամասն բնութագրերով և մոդելավորմամբ, որը պետք է ներառված լինի նախահաշվում)</li> <li>• Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) եզրակացության ձեռքբերում (դրա անհրաժեշտության դեպքում):</li> <li>• Ըստ անհրաժեշտության իրականացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակում</li> </ul>
